



ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ASSISTANCE INSURANCE RULES

Confirmed by

The Board of EFES ICJSC
Protocol 04 on 13.09.2025

Valid since

14.09.2025

Code: 04.11.01

Version: 3.0

TABLE OF CONTENTS

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ / GENERAL PROVISIONS	3
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ / INSURANCE SUBJECT	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ / INSURANCE OBJECT	4
4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ / DEFINITIONS, INSURANCE RISKS, INSURANCE ACCIDENTS	4
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ / EXPENSES REIMBURSED BY THE INSURER.....	15
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ / SUM INSURED, INSURANCE PREMIUM.....	22
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ / THE INSURANCE CONTRACT	24
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ / INSURANCE CONTRACT CONCLUION PROCEDURE.....	26
9. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ / ACTIONS OF THE PARTIES IN THE EVENT OF AN INSURANCE ACCIDENT. PROCEDURE FOR DETERMINING THE AMOUNT OF INSURANCE COMPENSATION	28
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ / GROUNDS FOR DENIAL IN INSURANCE COMPENSATION	35
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ / THE AMENDMENT AND TERMINATION OF THE INSURANCE CONTRACT	35
12. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ / RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES	39
13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ / RESOLUTION OF DISPUTES	41
14. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ / ՓԱԹԵԹՆԵՐ / TRAVEL ASSISTANCE INSURANCE PROGRAMMES.....	42
Աջակցության Ապահովագրության Կանոնների Հավելված 1.....	45

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն՝ Աջակցության ապահովագրության կանոնները (այսուհետ՝ Կանոններ կ/կամ Պայմաններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և գործող իրավական ակտերի հիման վրա, և սահմանում են ՀՀ տարածքից դուրս ճամփորդող ֆիզիկական անձանց բժշկական և այլ ծախսերի ապահովագրության իրականացման ընդհանուր կարգը, և համարվում են Աջակցության ապահովագրության պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագիր կ/կամ Վկայագիր) անբաժանելի մասը:

1.2. Սույն Կանոնների համաձայն «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով՝
Ա) Աջակցության ապահովագրություն,
Բ) Ֆինանսական ռիսկերի ապահովագրություն,
Գ) Դժբախտ պատահարներից ապահովագրություն:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

2.1. Սույն Կանոններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրող է հանդիսանում «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն՝ ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 14, տրված 25.07.2023թ., Ապահովագրողի պաշտոնական կայք – www.efes.am:

2.2 Սույն Կանոնների համաձայն՝ Ապահովադիր կարող են հանդիսանալ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները (գործունակ ֆիզիկական և իրավաբանական անձինք, պետական մարմիններ, օտարերկրյա պետություններ, և այլն):

2.3. Ապահովադիրը իրավունք ունի պայմանագիրը կնքել երրորդ անձանց համար (ապահովագրված անձինք): Եթե Ապահովադիրը հանդիսանում է Ապահովագրված անձ, ապա վերջինիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև Ապահովադիրի վրա:

2.4. Պայմանագրով Ապահովագրված անձինք ֆիզիկական անձինք են:

1. GENERAL PROVISIONS

1.1. These rules for assistance insurance (hereinafter referred to as the Rules) are developed in accordance with the legislative and other regulatory legal acts of the Republic of Armenia and determine the general terms and conditions for insurance of medical or other expenses when traveling outside of the Republic of Armenia (hereinafter referred to as abroad) and are an integral part of assistance insurance contracts concluded on the terms of the Rules.

1.2 The insurer, under the terms of the Rules, carries out voluntary insurance related to the classification of the following types of insurance:

- A) assistance insurance,
- B) insurance of financial risks.
- C) personal accident insurance

2. INSURANCE SUBJECT

2.1. For the insurance contracts concluded under the Rules, "EFES" CJSC is the Insurer, registration number at the CB of RA - 14, issued on 25.07.2023, website of the Company – www.efes.am.

2.2 Under the Rules, subjects of civil law (capable natural and legal persons, state bodies, foreign countries, etc.) can take the role of Insured.

2.3. The Insured has the right to conclude contracts on behalf of third parties (the Insured persons). If the Insured person is also the Insured, the rights and obligations of the former apply to the latter as well.

2.4. Under the Contract, Insured persons are natural persons.

2.5. Պայմանագիրը համարվում է կնքված հոգուտ Ապահովագրված անձի, եթե Պայմանագրում այլ Շահառու նշված չէ: Ապահովագրված անձից տարբերվող այլ անձի Շահառու նշելու պարագայում, ներառյալ, եթե Շահառու է ապահովագրված անձ չհանդիսացող Ապահովադիրը, անհրաժեշտ է Ապահովագրված անձի գրավոր համաձայնությունը:

Ապահովագրված անձի մահվան դեպքում, եթե Պայմանագրում այլ Շահառու նշված չէ, Շահառու են հանդիսանում Ապահովագրված անձի օրինական ժառանգները:

Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մոտ առաջացած ծախսերի հատուցումը կարող է իրականացվել անմիջապես Ապահովագրված անձին՝ վերջինիս մշտական բնակության վայր վերադառնալուց հետո, կամ այլ կազմակերպության (այսուհետ՝ Աջակցման Կենտրոն), որը կազմակերպել և մատուցել է սույն Կանոններով նախատեսված ծառայությունները և տեղում վճարել ծախսերը:

2.5. The Contract is concluded in favor of the Insured, unless another Beneficiary is mentioned in the Contract. An insurance contract in favor of a person who is not the Insured person, including in favor of a Beneficiary who is the Insured, but not the Insured person, may only be concluded with the written consent of the Insured person.

In case of the death of the Insured person, the Beneficiaries shall be the heirs of the Insured person, unless the Contract provides another Beneficiary.

Reimbursement of the expenses from an insurance accident of the Insured person can be made by a direct payment to the Insured person after returning to their place of permanent residence or to other entity (hereinafter Assistance Center) that arranged, provided and paid for the services prescribed by the Rules.

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Կանոններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում գույքային շահերը, կապված.

3.1.1. Բժշկական և դեղորայքային օգնության կազմակերպման և մատուցման (բժշկական ծառայություններ), այդ թվում՝ խորհրդատվությունների, Պայմանագրով սահմանված այլ ծառայությունների վճարման հետ, ներառյալ ֆիզիկական անձի առողջության վատթարացման հետևանքով տեղի ունեցած բուժատրանսպորտային ծախսերի հետ:

3.1.2. Ֆիզիկական անձանց՝ Պայմանագրով նախատեսված անկանխատեսելի ծախսերի հետ, այդ թվում՝ հետմահու ռեպատրիացիայի կազմակերպման ծախսերի վճարման, Ապահովագրված անձի ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպման, իրավաբանական խորհրդատվության ծառայության վճարման հետ:

3. INSURANCE OBJECT

3.1. In accordance with the Rules, the insurance objects are property interests related to:

3.1.1. The expenses for the organization and provision of medical and pharmaceutical care (medical services), including consultations and other services prescribed by the Contract, as well as medical transportation costs, due to deterioration of an individual's state of health .

3.1.2 The unforeseen expenses of individuals prescribed by the Contract, including expenses associated with the payment of organization of posthumous repatriation, the payment of organization of technical assistance on the road, the payment of organization for receiving legal assistance.

4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

4.1. Սույն Կանոնների շրջանակում օգտագործվում են հետևյալ սահմանումները.

4. DEFINITIONS, INSURANCE RISKS, INSURANCE ACCIDENTS

4.1. Within the framework of the Rules, the following definitions are used:

4.1.1. Աջակցման կենտրոն – մասնագիտացված կազմակերպություն (ընկերություն), որի վավերապայմանները ներկայացված են ապահովագրության Պայմանագրում կամ Վկայագրում և/կամ Ապահովագրողի պաշտոնական կայքում, որը Ապահովագրողի պատվերով իրականացնում է սույն Կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումը:

4.1.2. Թեթև մարդատար ավտոմեքենա – մինչև 3,5 տոննա քաշը և վարորդը ներառյալ մինչև 8 նստատեղ ունեցող ավտոմեքենա, որը ունի համապատասխան փաստաթղթավորված գրանցում, և Ապահովագրողի Աջակցման Կենտրոն դիմելու պահի դրությամբ գտնվում է իրավական շահագործման մեջ:

4.1.3. Հիվանդության հանկարծակի սրացում, այդ թվում թունավորում – հիվանդություն, որն ի հայտ է եկել հանկարծակիորեն Ապահովագրության Վկայագրի գործողության ընթացքում և պահանջում է անհապաղ և/կամ արտակարգ բժշկական միջամտություն, այդ թվում Ապահովագրված անձի մահվան հանգեցնող՝ պայմանով, որ նշված իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից Պայմանագրով սահմանված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ, Պայմանագրի գործողության ընթացքում:

4.1.4. Դժբախտ պատահար - արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, այդ թվում՝ սխալ բժշկական մանիպուլյացիաները, անաֆիլակտիկ շոկը, սուր թունավորումը, շնչափեղծումը, ջրահեղձումը, մարմնի գերսառեցումը կամ տաքացումը, այրվածքները, և այլն, որոնց դեպքում Ապահովագրված անձի կամքից անկախ մարմնական վնասվածքների կամ տոքսիկ ազդեցության հետևանքով վնաս է հասցվում նրա առողջությանը, կամ սահմանափակվում է նրա ֆունկցիոնալությունը (դառնում է հաշմանդամ), կամ վրա է հասնում նրա մահը, պայմանով, որ նշված իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից Պայմանագրով սահմանված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ, Պայմանագրի գործողության ընթացքում:

Սխալ բժշկական մանիպուլյացիաները համարվում են դժբախտ պատահար, միայն եթե առկա է Ապահովագրված անձի առողջությանը պատճառված էական և անդառնալի վնասի կամ մահվան և դրանց միջև դատա-բժշկական փորձաքննության և դատական որոշման հիման վրա հաստատված պատճառահետևանքային կապ:

Դժբախտ պատահար չեն համարվում հիվանդությունները կամ դրանց բարդացումները (ինչպես նախկինում ախտորոշված, այնպես էլ առաջին անգամ հայտնաբերված), ինչպես նաև այն հիվանդությունները կամ դրանց բարդացումները, որոնք առաջացել (զարգացել) են արտաքին գործոնների ազդեցության հետևանքով, այդ թվում նաև՝ սրտամկանի ինֆարկտը,

4.1.1. Assistance center - a specialized organization (entity), the details of which are specified in the insurance contract or Policy and (or) on the official website of the Insurer, which, on behalf of the Insurer, carries out the services proscribed by the Rules.

4.1.2. Passenger vehicle - a car weighing up to 3.5 tons and having not more than 8 seats, including the driver, with proper registration documents, which is in operating state at the time of contacting the Assistance center of the Insurer.

4.1.3. Sudden acute illness, including poisoning - a disease that has unexpectedly surfaced during the validity of the Insurance Policy and requires the provision of immediate and (or) emergency medical care, including resulting in the death of the Insured, provided that the specified event occurred during the stay of the Insured person on the insurance area specified in the Contract, during the period of its validity.

4.1.4. Personal accident - an external, short-term (up to several hours), unintentional, sudden confluence of circumstances and conditions, such as: wrongful medical manipulation, anaphylactic shock, acute poisoning, suffocation, drowning, body freezing or overheating, burns, etc., as a result of which the Insured person's health is harmed due to bodily injuries or toxic exposure, or their functionality becomes limited (they become disabled) or die, provided that the specified event occurred during the stay of the Insured person on the insurance area specified in the Contract, during the period of its validity.

Wrongful medical manipulations are considered personal accidents only if a causal relationship was established based on forensic examination on the connection of the substantial and irreversible harm caused to the health of the Insured person (or their death) and the medical manipulation, and a court order.

Diseases and their complications (both previously diagnosed and newly detected) provoked by external factors, including myocardial infarction, stroke, aneurysms, failures of organs, congenital defects of organs do not constitute a personal accident.

գլխուղեղի կաթվածը, անևրիզմները, օրգանների ֆունկցիոնալ անբավարարությունը, օրգանների բնածին արատները:

4.1.5 Քրոնիկ հիվանդության սրացում – Ապահովագրության ժամկետի ընթացքում Պայմանագրով նշված Ապահովագրության տարածքում առողջության հանկարծակի սուր վատթարացում՝ կապված նախկինում ունեցած քրոնիկ հիվանդությունների և/կամ պաթոլոգիաների հետ, այդ թվում՝ կիստաների, խոցերի և քարերի գոյացությունների հետ, և որը պահանջում է անհապաղ և անհետաձգելի բժշկական օգնություն, այդ թվում՝ հանգեցրել է Ապահովագրված անձի մահվան, պայմանով, որ նշված իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրված անձի՝ Պայմանագրով սահմանված ապահովագրության ժամկետում և ապահովագրական տարածքում:

4.2. Ապահովագրական ռիսկ է համարվում ենթադրելի իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է սույն Պայմանագիրը:

4.3. Ապահովագրական պատահար է համարվում սույն Կանոնների 4.4 կետով սահմանված իրադարձությունները, որոնք հանգեցնում են Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցման տրամադրման պարտավորությանը:

Ապահովագրության Պայմանագիրը կարող է կնքվել 4.4 կետում նշված իրադարձություններից ինչպես մեկի համար, այնպես դրանց տարբեր համակցություններով:

4.4. Սույն Կանոններով Ապահովագրողը ապահովագրության Պայմանագրով տրամադրում է ապահովագրական ծածկույթ՝ հետևյալ ռիսկերի համար.

4.4.1. «Բուժօգնություն» - Ապահովագրված անձի հանկարծակի սուր հիվանդության, այդ թվում՝ թունավորման, քրոնիկ հիվանդության սրացման, դժբախտ պատահարի, Ապահովագրված անձի մահվան հետևանքով բժշկական կամ այլ ծառայություն ստանալու համար բժշկական կենտրոն կամ այլ հաստատություն դիմելու հետևանքով առաջացած անկանխատեսելի ծախսերի առաջացում, ինչպես նաև կապված ապահովագրության Պայմանագրով նախատեսված Ապահովագրված անձի կողմից արտասահմանում գտնվելու ընթացքում այլ հանգամանքների հետ:

4.4.2. «Իրավաբանական խորհրդատվության կազմակերպման աջակցություն» - իրավաբանի խորհրդատվության ստացման հետ կապված

4.1.5. Exacerbation of a chronic disease – during the period of validity of the Contract and in the territory specified in the Contract, sudden and acute deterioration of the state of health, connected with a previously existing chronic disease and (or) pathology, including the formations of cysts, ulcers and stones, that require immediate and emergency medical care, including those resulting in the death of the Insured person, provided that the specified event occurred during the stay of the Insured person on the insurance area specified in the Contract, during the period of its validity.

4.2. In insurance risk is a foreseeable event, for the occurrence of which the Contract is concluded.

4.3. An insurance accident is an event from the ones specified in clause 4.4 of the Rules that leads to the Insurer's obligation to provide insurance compensation.

The insurance contract can be concluded both for one of the events mentioned in clause 4.4, and for their various combinations.

4.4. In accordance with the Rules, the Insurer provides insurance coverage under the insurance contract against the following risks:

4.4.1. "Medical Assistance" - the occurrence of unforeseen expenses due to contacting a medical and other institution in connection with a sudden acute illness of the Insured person, including poisoning, exacerbation of a chronic disease, a personal accident, the death of the Insured person, requiring medical and other assistance, as well as in due to other circumstances stipulated by the Contract, when the Insured person is abroad.

4.4.2 "Assistance in receiving legal advice" - unforeseen expenses associated with obtaining legal advice, as well as

անկանխատեսելի ծախսեր, ինչպես նաև Ապահովագրված անձի՝ օտարերկրյա պետության տարածքում գտնվելու ընթացքում իրավաբանի կողմից քրեական և քաղաքացիական հայցերի իրավական օգնության ծախսեր:

4.4.3. «Ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպում» - Թեթև մարդատար ավտոմեքենայի էվակուացիայի և/կամ վարորդի և ուղևորների տեղափոխման անկանխատեսելի ծախսերը՝ կապված ավտոմեքենայի շահագործման կամ ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում դրա առանձին ագրեգատների, համակարգերի կամ մասերի խափանման հետ, որոնք թույլ չեն տալիս տվյալ մեքենային ինքնուրույն տեղաշարժվել:

4.4.4 Լրացուցիչ ծածկույթներ՝ համաձայն սույն Կանոններին կից Հավելված 1-ի՝ «Աջակցության Ապահովագրության Լրացուցիչ Ծածկույթներ»:

4.5. Կանոններով 4.4 կետով ապահովագրական պատահար չեն հանդիսանում և ենթակա չեն ծախսերը:

4.5.1. Կապված քրոնիկ հիվանդությունների բուժման հետ (բացառությամբ սրացումների դեպքում անհետաձգելի բուժօգնության ծախսերից), ինչպես նաև հիվանդությունները, որոնք հայտնի են եղել Ապահովագրության Վկայագիրը կնքելու պահին, ինչպես նաև նախքան Ապահովագրության Վկայագիրը կնքելը առկա եղած հիվանդությունների հետ, անկախ նրանից իրականացվել է բուժում, թե ոչ (այդ թվում կապված քարերի, խոցերի, և այլ գոյացությունների առաջացման հետ),

4.5.2. Կապված մինչև ապահովագրության ժամկետի սկիզբը առկա հիվանդությունների, վնասվածքների, վիճակների հետ, կամ կապված մինչև ապահովագրության սկիզբ կատարված բուժման հետ,

4.5.3. Կապված ապահովագրված անձի առողջության վատթարացման կամ մահվան հետ՝ դեղամիջոցների ընդունման հետևանքով, այդ թվում՝ Աջակցման Կենտրոնի կողմից ուղղորդված բժշկի կողմից չցուցված դեղամիջոցներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,

4.5.4. Կապված ապահովագրված անձի առողջության վատթարացման կամ մահվան հետ այն դեպքում, եթե ճանապարհորդությունը Ապահովագրված անձի առողջության վիճակից ելնելով եղել է հակացուցված,

legal assistance in the investigation of criminal and civil cases during the stay of the Insured person in a foreign state.

4.4.3. "Technical assistance on the road" - unforeseen expenses for the evacuation of a car and (or) the transportation of the driver and passengers due to the failure of individual units, systems, components and devices of the vehicle as a result of its operation or a traffic accident that does not allow the vehicle to start or continue to move independently.

4.4.4 Additional coverages in accordance with Appendix 1 to the Rules "Additional coverages of assistance insurance".

4.5. According to clause 4.4 of the Rules, the following are not recognized as insurance accidents and the incurred expenses are not covered:

4.5.1. Treatment of chronic diseases, apart from expenses for the provision of emergency medical care in the event of an exacerbation of a chronic disease, as well as diseases known or existing at the time of or prior to conclusion of the Contract, regardless of whether they were treated or not (including associated with the formation of stones, ulcers, etc.),

4.5.2. Diseases, injuries, conditions that existed before the start of the insurance period, or related to the treatment that the Insured person underwent before the start insurance,

4.5.3. Deterioration of health or death of the Insured person in connection with use of medications, including those that were not prescribed by a doctor advised by the Assistance center, unless otherwise provided by the Contract,

4.5.4. Deterioration of health or death of the Insured person if the trip was not advised due to the state of health of the Insured person,

4.5.5. Ախտորոշիչ (դիագնոստիկ) մանիպուլյացիաների (այդ թվում խորհրդատվությունների և լաբորատոր հետազոտությունների) և վերահսկիչ զննումների՝ առանց հաջորդող բուժման: 4.5.6. Անգիոգրաֆիային, ինչպես նաև սրտի և անոթների վիրահատության հետ կապված ծախսերը, այդ թվում անգիոպլաստիկան, ստենտավորումը, շունտավորումը, և այլն, նույնիսկ եթե դրանց անցկացման համար առկա են բժշկական ցուցումներ: Այն դեպքում, երբ ընդհանուր հաշվից հնարավոր չէ առանձնացնել վերոնշյալ մանիպուլյացիաների ծախսերը, դրանց ծախսերը հաշվարկվում են հիվանդանոցում գտնվելու առաջին երկու օրվա չափով (վիրահատության օր և դրան հաջորդող օր) և հանվում են ընդհանուր հաշվի թվից: 4.5.7. Օնկոլոգիական հիվանդությունների և/կամ դրանց հետևանքների բուժման հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, 4.5.8. Բարորակ նորագոյացությունների բուժման ծախսերը՝ անկախ նրանից Ապահովագրված անձը նախքան ճամփորդությունը տեղյակ էր տվյալ հիվանդությունից, թե ոչ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.9. Արևային այրվածքների և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ մաշկի կտրուկ փոփոխությունների բուժման հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.10. Ապահովագրված անձի կողմից այնպիսի բժշկական ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը, որոնք կապված չեն հանկարծակի հիվանդության կամ դժբախտ պատահարի ի հայտ գալու հետ՝ պրոֆիլակտիկ միջոցառումներ և ընդհանուր բժշկական հետազոտություններ, 4.5.11. Կապված հղիության վարման և դրա ընդհատման հետ՝ անկախ դրա տևողությունից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.12. Կապված ծննդոգնության և երեխայի հետծննդական խնամքի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.13. Կապված հղիության պաթոլոգիական ընթացքի, հղիության ընթացքում առաջացած բարդությունների հետ՝ անկախ դրա տևողությունից, բացառությամբ արտարգանդային հղիության դեպքում շտապ բուժօգնության ծախսերից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.14. Վեներական հիվանդությունների, առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող	4.5.5. Diagnostic manipulations (including consultations and laboratory tests) and follow-up examinations without further treatment, 4.5.6. Angiography, as well as the costs associated with operations on the heart and blood vessels, including angioplasty, stenting, bypass, etc., even if there are medical prescriptions for their implementation. If it is impossible to partition the cost of the abovementioned manipulations from the total bill, their cost is taken as the first two days of hospitalization (the day of the operation and the next day) and is deducted from the amount of the final bill for hospitalization, 4.5.7. Oncological diseases and/or their consequences, unless otherwise provided by the Contract, 4.5.8. Benign tumors, regardless of whether the Insured Person was aware of the disease before the trip or not, unless otherwise provided by the Contract, 4.5.9. Sunburns and drastic skin changes caused by ultraviolet rays, unless otherwise provided by the Contract, 4.5.10. Medical services not related to the occurrence of a sudden illness or accident - preventive measures and general medical examinations, 4.5.11. Management of pregnancy and its termination, regardless of the term, unless otherwise provided by the Contract, 4.5.12. Obstetric care and postnatal care of a child, unless otherwise provided by the Contract, 4.5.13. Pathological course of pregnancy, complications during pregnancy, regardless of its term, except for the provision of emergency medical care in case of ectopic pregnancy, unless otherwise provided by the Contract, 4.5.14. Venereal diseases, diseases that are predominantly sexually transmitted, as well as diseases resulting from HIV,
--	--

հիվանդությունների, ինչպես նաև ՄԻԱՎ, ՁԻԱՀ և հեպատիտի ցանկացած տեսակի հետևանքով առաջացած հիվանդությունների և դրանց հետևանքների (ներառյալ՝ բարդությունների) բուժման ծախսերը, 4.5.15. Պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության, տրանսպլանտոլոգիական (օրգանների փոխպատվաստում), ցանկացած տեսակի պրոթեզավորման, ներառյալ ստոմոտոլոգիական, օրթոպեդիական, և ակնաբուժական պրոթեզավորման հետ կապված ծախսերը, ներառյալ պրոթեզների, էնդոպրոթեզների, իմպլանտների ծախսերը (այդ թվում անգիոգրաֆիա, անգիոպլաստիկա, ստենտավորում, էլեկտրոկարդիոստիմուլյատոր և այլն), 4.5.16. Հետևյալ ստոմոտոլոգիական բուժօգնության տրամադրման ծախսերը. օրթոդոնտիկ բուժում, իմպլանտների տեղադրում, կոսմետիկ և պրոֆիլակտիկ գործողություններ, ատամնաքարի հեռացում, ընդհանուր բժշկական զննություն և խորհրդատվություն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.17. Այնպիսի ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերը, որոնք բժշկական տեսակյունից անհրաժեշտություն չեն ներկայացնում կամ այնպիսի բուժման հետ կապված ծախսերը, որոնք բժշկի կողմից չեն նշանակվել, 4.5.18. Այն ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով բժշկին դիմելու և նրա կողմից կատարված նշանակումից Ապահովագրված անձի ինքնակամ հրաժարվելու հետևանքով, 4.5.19. Մանուալ թերապիայի, ռեֆլեքսոթերապիայի (ակուպունկտուրայի), խիրոպրակտիկայի, մերսման, հոմեոպատիայի, ֆիտո և նատուրոտերապիայի և այլ նմանատիպ մեթոդներով բուժման հետ կապված ծախսերը, 4.5.20. Ապահովագրված անձի բարեկամների կողմից վերջինիս բուժման կամ խնամքի ծախսերը, ներառյալ Ապահովագրված անձի բարեկամների ապրուստի հետ կապված ծախսերը, որոնք պայմանավորված են նրա բուժմամբ և մշտական բնակության երկիր հետագա վերադարձի հետ, 4.5.21. Համապատասխան լիցենզավորում չունեցող բժշկական ծառայություններ մատուցող հաստատության կամ բժշկական գործունեություն իրականացնելու իրավունք չունեցող անձի ծառայություններից օգտվելու հետևանքով առաջացած ծախսերը,	AIDS and any form of hepatitis and their consequences (including complications), 4.5.15. Plastic and reconstructive surgery, transplantology (organ transplantation), all kinds of prosthetics, including dental, ocular, orthopedic, as well as the cost of prostheses, endoprostheses, implants (including angiography, angioplasty, stenting, pacemakers, etc.); 4.5.16. The expenses for the provision of the following dental (stomatological) medical care: orthodontic treatment, installation of implants, cosmetic and preventive measures, removal of tartar, general medical examinations and consultations, unless otherwise provided by the Contract, 4.5.17. Services that are not medically necessary, or treatment expense not prescribed by a doctor, 4.5.18. Expenses, arising as a result of the Insured person's voluntary refusal to comply with the doctor's prescriptions received by him in connection with the insurance accident, 4.5.19. Manual therapy, reflexology (acupuncture), chiropractic, massage, homeopathy, herbal and natural therapy, etc., 4.5.20. Treatment or care of the Insured person by their relatives, as well as the costs associated with the stay of the relatives, for ensuring the Insured person's treatment and subsequent return to their country of permanent residence, 4.5.21. Services provided by a medical institution that does not have an appropriate license, or by a person who does not have the right to carry out medical activities,
---	--

4.5.22. Համապատասխան և օրենքով սահմանված կարգով փաստաթղթավորված (հաշիվ, չեկ, անդորրագիր, և այլն) հաստատում չունեցող տրանսպորտային և այլ ծառայությունների հետ կապված ծախսերը, 4.5.23. Ապաքինման, վերականգնողական բուժման և ֆիզիոթերապիայի հետ կապված ծախսերը, 4.5.24. Հանգստավայրերում, առողջարանային համալիրներում, հանգստյան տներում, պանսիոնատներում և այլ նմանատիպ վայրերում իրականացված բուժումների արդյունքում առաջացած ծախսերը, ներառյալ դրանց հետևանքով առաջացած հիվանդությունների, և/կամ ռեպատրիացիայի (ներառյալ՝ հետմահու) ծախսերը, 4.5.25. Վակցինացիայի իրականացման հետ կապված, այդ թվում ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած կատաղության, էնցեֆալիտի և այլնի համար կատարվող վակցինացիայի, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.26. Պլանային վիրահատությունների և հոսպիտալացման ծախսերը, նույնիսկ եթե տվյալ գործողությունները կապված են Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած ապահովագրական պատահարի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.27. Դժբախտ պատահարի կամ անհետաձգելի հիվանդության հետ չկապված բժշկական փորձաքննությունների, լաբորատոր և դիագնոստիկ հետազոտությունների իրականացման հետ, 4.5.28. Այն ծախսերը, որոնք կապված են հավելյալ հարմարությունների տրամադրման հետ, այդ թվում «Լյուքս» պալատի, հեռուստացույցի, օդափոխիչ սարքի, վարսահարդարի, մերսողի, թարգմանչի և այլ նմանատիպ ծառայությունների հետ, 4.5.29. Կապի միջոցների (հաղորդագրություններ, բանակցություններ) ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.30. Ապահովագրված անձի հիմնական բնակության երկիր վերադառնալուց հետո, ինչպես նաև Ապահովագրության Վկայագրի գործողության ավարտից հետո ի հայտ եկած ծախսերը, 4.5.31. Ստացիոնար բուժման, բժշկա-տրանսպորտային, տրանսպորտային, հետմահու ռեպատրիացիայի հետ կապված այն ծախսերը, որոնք արտոնված չեն Աջակցության Կենտրոնի կողմից: Ապահովագրողը	4.5.22. Expenses related to transportation and other services that are not confirmed by relevant and legally prescribed documents (invoice, receipt, voucher, etc.). 4.5.23. Recovery, rehabilitation treatment and physiotherapy, 4.5.24. Expenses arising from treatments carried out at resorts, sanatoriums, health resorts, boarding houses, rest homes and other similar institutions, including expenses for illnesses resulting therefrom and/or for repatriation (including posthumous repatriation). 4.5.25. Vaccinations, including vaccination against rabies, encephalitis, etc. as a result of an insurance accident, unless otherwise provided by the Contract, 4.5.26. Elective surgeries and hospitalizations, even if these activities are related to an insurance accident that occurred during the validity period of the Contract, unless otherwise provided by the Contract, 4.5.27. Medical examinations, laboratory and diagnostic tests not related to an accident or sudden illness, 4.5.28. Expenses related to providing additional comfort, including luxury rooms, TV, air conditioning, services of a hairdresser, massage therapist, translator, etc., 4.5.29. Expenses for means of communication (messages, negotiations), unless otherwise provided by the Contract. 4.5.30. Expenses incurred after the return of the Insured person to the country of their permanent residence, as well as after the validity period of the Contract, 4.5.31. Expenses for inpatient treatment, medical-transportation, transportation costs, posthumous repatriation costs not authorized by the Assistance center. The Insurer has the right to reimburse such expenses in full or in part, if
---	--

իրավունք ունի հատուցել նման ծախսերը մասնակի կամ ամբողջությամբ, եթե Աջակցման Կենտրոն չդիմելու պատճառները համարի օբյեկտիվ, 4.5.32. Կապված ծծմբային խցանների ախտորոշման և բուժման հետ, 4.5.33. Բարոկամերայում իրականացված բուժման հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.5.34. Ծախսերը, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից մշտական բնակության երկիր էվակուացվելուց ինքնակամ հրաժարվելուց, երբ էվակուացիան բժշկական ցուցմամբ թույլատրվում է (5.2.7 կետ), եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.6. 4.4 կետում նշված իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահարներ, եթե դրանք կապված են. 4.6.1. Կոնվուլսիվ վիճակի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.6.2. Նյարդային և հոգեկան հիվանդությունների, նեվրոզի (պանիկական նոպաների, դեպրեսիայի, հիստերիկ սինդրոմների և այլն), հոգնածության, գերժանրաբեռնվածության հետ, 4.6.3. Դեղամիջոցների գերօգտագործման և/կամ սխալ օգտագործման հետ, ինչպես նաև ընդունված դեղերի և (կամ) դրանց առանձին բաղադրիչների նկատմամբ անհատական անընդունելիության, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.6.4. Ալկոհոլ պարունակող միջոցների ընդունման (ալկոհոլի օգտագործման առկայությունը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով), և/կամ ապահովագրված անձի կողմից ալկոհոլի ազդեցության տակ գտնվելու հետ, որը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, 4.6.5. Թմրանյութեր, տոքսիկ նյութեր և այլ հոգեմետ միջոցների օգտագործման (թմրանյութերի, տոկսիկ նյութերի և այլ հոգեմետ միջոցների օգտագործման առկայությունը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի	it deems the reasons for not contacting the Assistance center objective, 4.5.32. Diagnosis and treatment of sulfur plugs, 4.5.33. Treatment in a pressure chamber, unless otherwise provided by the Contract, 4.5.34. Expenses incurred as a result of the Insured person's voluntary refusal to evacuate to the country of their permanent residence in cases where it is permitted for medical reasons (clause 5.2.7), unless otherwise provided by Contract, 4.6. The events specified in clause 4.4 of the Rules are also not recognized as insurance accidents if they are associated with: 4.6.1. Convulsive conditions, unless otherwise provided by the Contract, 4.6.2. Neurological and mental illnesses, neurosis (panic attacks, depression, hysterical syndromes, etc.), fatigue, overworking, 4.6.3. Overdose and (or) misuse of medications, as well as with individual intolerance to the drugs taken and (or) their individual components, unless otherwise provided by the Contract, 4.6.4. The use of alcohol-containing substances and (or) being under the influence of alcohol, which may be reflected in medical documents / reports, recorded in the testimony of witnesses and other documents related to the event and (or), unless otherwise provided by the Contract, 4.6.5. The use of narcotic, toxic drugs and other psychedelic substances and (or) being under the influence of narcotic, toxic drugs and other psychedelic substances, which may be reflected in medical documents / reports, recorded in the testimony of witnesses and other documents related to the event and (or), unless otherwise provided by the Contract,
---	--

վերաբերյալ այլ փաստաթղթերով) և/կամ ապահովագրված անձի կողմից թմրանյութերի, տոկսիկ նյութերի և այլ հոգեմետ միջոցների ազդեցության տակ գտնվելու հետ, որը կարող է փաստվել բժշկական եզրակացություններում/ հաշվետվություններում, արձանագրվեն վկաների ցուցմունքներով և պատահարի վերաբերյալ այլ փաստաթղթերով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.6. Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) հետ,

4.6.7. Տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների, մետեորիտների և այլ տիեզերական մարմինների/առարկաների անկման, կարանտինի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.8. Ապահովագրված անձի և/կամ Շահառուի՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալուն միտված կանխամտածված գործողությունների հետ,

4.6.9. Ապահովագրված անձի կողմից կատարված հակաօրինական գործունեության հետևանքով, որն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ ունի ուղիղ պատճառահետևանքային կապ, բայց ամեն դեպքում բացառելով անօրինական շահերի ապահովագրությունը,

4.6.10. Ապահովագրված անձի թռիչքային սարքերով թռնելու, դրանք ղեկավարելու հետևանքով, բացի այն դեպքերի, երբ ինքնաթիռը ղեկավարվում է պրոֆեսիոնալ օդաչուի կողմից և Ապահովագրված անձը հանդիսանում է այդ քաղաքացիական ինքնաթիռի ուղևոր,

4.6.11. Ապահովագրված անձի ոչ շարժիչային թռչող սարքերով, շարժիչային պլաներներով և գերթթև սարքերով թռչելու հետ, ինչպես նաև պարաշյուտով թռիչքների և օդապարիկով թռիչքի հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.12. Ապահովագրված անձի՝ ցանկացած զինված ուժերում կամ խմբավորումներում ծառայության հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.13. Վտանգավոր սպորտերով և/կամ վտանգավոր հորքիններով սիրողական (մեկանգամյա հիմքով, օրինակ՝ արձակուրդի կամ հանգստյան օրերի ժամանակ) զբաղվելու հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Վտանգավոր սպորտեր և հորքիններ են համարվում ժամանցային կամ մարզական գործողությունները, որոնք ենթադրում են ֆիզիկական ռիսկի ավելի բարձր աստիճան, քան սովորական առօրյա գործունեությունը, բայց ընդհանուր առմամբ իրականացվում են կառավարվող, վերահսկվող և

4.6.6. Suicide (attempted suicide) of the Insured person,

4.6.7. Natural disasters and their consequences, epidemics, fall of meteorites and other space bodies/objects, quarantine, unless otherwise provided by the Contract,

4.6.8. Intentional actions of the Insured person and (or) the Beneficiary, aimed at the occurrence of the insurance accident;

4.6.9. Committing an illegal act by the Insured person that is in direct causal relationship with the occurrence of the insurance accident, unless otherwise provided by the Contract, but in any case, excluding insurance of illegal interests,

4.6.10. Flight of the Insured person on an aircraft, controlling it, except for cases of passenger flight on a civil aviation aircraft operated by a professional pilot, unless otherwise provided by the Contract,

4.6.11. Flight of the Insured person on a non-motorized aircraft, motor gliders, ultralight aircraft, as well as parachuting and hot air balloon flight, unless otherwise provided by the Contract,

4.6.12. Service of the Insured person in any armed forces and formations, unless otherwise provided by the Contract,

4.6.13. Amateur (occasional, e.g., during vacations or weekends) participation in hazardous sports and/or hazardous hobbies, unless otherwise provided by the Contract. Hazardous sports and hobbies are considered leisure or athletic activities that involve a higher degree of physical risk than ordinary daily activities but are generally carried out under managed, supervised, and regulated conditions. Such activities may require a medium or lower level of physical fitness, skills, or training and often involve the use of standard safety equipment. Examples include but

կարգավորվող պայմաններում: Այս գործունեությունը կարող է պահանջել ֆիզիկական պատրաստվածության, հմտության կամ մարզման միջին կամ ավելի ցածր մակարդակ և հաճախ ներառում է ստանդարտ անվտանգության սարքավորումների օգտագործում: Օրինակներ են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ հատուկ կահավորված երթուղիներով դահուկներով կամ սնոուբորդով սահք, սկուբա դայվինգը մինչև 30 մետր՝ համապատասխան վկայականով, ծիավարությունը, լեռնագնացությունը 4000 մետրից ցածր բարձրություններում, փակ տարածքներում լեռնամագլցումը, կվադրոցիկի վարումը և նմանատիպ գործունեությունը,

4.6.14. Էքստրեմալ սպորտերով և/կամ էքստրեմալ հորբիներով սիրողական կամ պրոֆեսիոնալ զբաղվելու հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, էքստրեմալ սպորտեր և հորբիներ են համարվում այն գործողությունները, որոնք զգալիորեն բարձրացնում են լուրջ մարմնական վնասվածքի, մշտական հաշմանդամություն ստանալու կամ մահվան ռիսկը՝ իրենց բնույթով վտանգավոր են, տեխնիկապես բարդ կամ անց են կացվում անկանխատեսելի, հեռավոր կամ բարձր ռիսկային միջավայրերում: Այս գործողությունները հաճախ պահանջում են հատուկ վերապատրաստում, մասնագիտական մակարդակի սարքավորումներ և կարող են ներառել բարձր արագություններ, զգալի բարձրություններ, անվերահսկելի բնական միջավայրեր կամ բարձր ֆիզիկական պատրաստվածություն և դիմացկունություն: Օրինակներ են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ պարաշյուտային թռիչք, բեյս-ցատկ, բանջի-ցատկ, 4000 մետրից բարձր լեռնագնացություն, քարանձավային սուզում կամ սկուբա սուզում 30 մետրից ավելի խորը, մոտոսպորտի մասնակցություն, հատուկ կահավորված երթուղիներից դուրս դահուկներով կամ սնոուբորդով սահք, պարապլանինգ, ազատ ժայռամագլցում և մարտահրավերներ,

4.6.15. Ցանկացած սպորտով պրոֆեսիոնալ զբաղվելու հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

4.6.16. Շարժիչային տրանսպորտային միջոցների (բացառությամբ ավտոմոբիլի և էլեկտրական սկուտերների) կառավարման և/կամ դրանցով որպես ուղևոր ուղևորության հետ, այդ թվում ջրային (շարժիչավոր առագաստանավեր/ զբոսանավեր, ջրային մոտոռուլլերներ, սկուտերներ, մոպեդներ, զբոսանավեր և այլն), եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

are not limited to: skiing or snowboarding on specially equipped trails, scuba diving up to 30 meters with an appropriate certificate, horseback riding, mountaineering at altitudes below 4000 meters, indoor rock climbing, quad biking, and similar activities.

4.6.14. Amateur or professional participation in extreme sports and/or extreme hobbies, unless otherwise provided by the Contract. Extreme sports and hobbies are considered activities that significantly increase the risk of serious bodily injury, permanent disability, or death, due to their inherently dangerous nature, technical complexity, or because they are carried out in unpredictable, remote, or high-risk environments. Such activities often require special training, professional-level equipment, and may involve high speeds, considerable heights, uncontrolled natural environments, or high physical fitness and endurance. Examples include, but are not limited to: parachuting, BASE jumping, bungee jumping, mountaineering at altitudes above 4000 meters, cave diving or scuba diving deeper than 30 meters, participation in motorsports, skiing or snowboarding off designated trails, paragliding, free climbing, and similar challenges.

4.6.15. Professional participation in any kind of sport, unless otherwise provided by the Contract.,

4.6.16. Driving or being a passenger in motor vehicles (excluding cars and electric scooters), including water vehicles (motorized sailing boats / yachts, water scooters, motor scooters, mopeds, yachts, etc.), unless otherwise provided by the Contract,

4.6.17. Ահաբեկչական գործողությունների և դրանց հետևանքների հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: 4.7. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, Կանոնների 4.4 կետով նշված իրադարձությունները չեն համարվում ապահովագրական պատահար, եթե ճանապարհորդությունը նախատեսված է. 4.7.1. Բարձր ռիսկի գործունեության / աշխատանքի համար (այդ թվում որպես հանքափոր, շինարար, էլեկտրամոնտաժող, և այլն), 4.7.2. Եթե Ապահովագրված անձի ուղևորությունը հետապնդում է բուժում ստանալու նպատակ: Ընդ որում, Ապահովագրողը չի հատուցում բուժման հետ կապված ծախսերը, որոնք հանդիսացել են տվյալ պետություն կատարած ուղևորության նպատակ, ինչպես նաև այն ծախսերը, որոնք առաջացել են այդպիսի բուժման հետևանքով Ապահովագրված անձի առողջության վատթարացման կամ մահվան պատճառով: Քրոնիկ հիվանդությունների սրացումները չեն համարվում ապահովագրական պատահար, և Ապահովագրողը ազատվում է անհետաձգելի բուժօգնության ծախսերի հատուցումից, ինչպես նաև սույն Կանոններով և/կամ Պայմանագրով նախատեսված այլ ծառայությունների կազմակերպման ծախսերից, այդ թվում՝ տրանսպորտային և հետմահու ռեպատրիացիայի ծախսերից, եթե ճամփորդությունը ուներ բուժում ստանալու նպատակ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: 4.8. Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ և լրացուցիչ ապահովագրավճարի վճարման դեպքում ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել 4.5, 4.6 և 4.7 կետերով թվարկված որոշ իրադարձությունների ներառում որպես ապահովագրական պատահար: Այդ դեպքում Ապահովագրողը իրավունք ունի տվյալ կետերի վրա կիրառել լրացուցիչ հատուցման սահմանաչափեր և չհատուցվող գումարներ: 4.9. «Իրավաբանական խորհրդատվության կազմակերպման աջակցություն» ռիսկով չեն համարվում ապահովագրական պատահար և չեն հատուցվում ծախսերը..	4.6.17. Acts of terrorism and their consequences, unless otherwise provided by the Contract. 4.7. Unless otherwise provided by the Contract, the events specified in clause 4.4 of the Rules are not recognized as insurance accidents if the trip was related to: 4.7.1. Engaging in activities/work associated with high risk (including a miner, builder, electrician, etc.), 4.7.2. Receiving treatment. At the same time, the Insurer does not reimburse the costs of treatment, which were the purpose of the trip, as well as costs caused by the deterioration of health or death of the Insured person in connection with this treatment. An exacerbation of a chronic disease will not be considered an insurance accident, and the Insurer will not cover the costs of providing immediate and (or) emergency medical care, as well as the costs associated with the organization of other services, including transportation services and posthumous repatriation services provided by the Rules and the Contract, if the trip was undertaken to receive a treatment, unless otherwise provided by the Contract. 4.8. By additional agreement of the Parties and for additional insurance premium, the events specified in clauses 4.5, 4.6 and 4.7 can be included in the Contract, meanwhile the Insurer retains the right to establish additional limits of liability and deductible amounts. 4.9. The following are not recognized as insurance accidents of the risk “Assistance in receiving legal advice” and the incurred expenses are not covered:
---	---

4.9.1. Կապված մինչև ապահովագրության ժամկետի սկիզբը տեղի ունեցած քրեական կամ քաղաքացիական հայցերի հետ: 4.10. «Ճանապարհին տեխնիկական աջակցության կազմակերպում» ռիսկով չեն համարվում ապահովագրական պատահար և չեն հատուցվում ծախսերը. 4.10.1. 5 տարուց վաղ արտադրված տրանսպորտային միջոցի խափանման կամ կորստի հետ, կամ 10 տարուց վաղ արտադրված տրանսպորտային միջոցի ճանապարհատրանսպորտային պատահարի հետ, 4.10.2. Տրանսպորտային միջոցի վնասի հետ, որի թույլատրելի առավելագույն քաշը գերազանցում է 3,5 տոննան: 4.10.3. Կապված են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությամբ պայմանավորված վնասների հատուցման հետ, 4.10.4. Տրանսպորտային միջոցի վնասի հետ, որը իրականացնում է ուղևորների վճարովի տեղափոխություն, անկախ թույլատրված, թե՛ ոչ: 4.11. Ցանկացած դեպքում Ապահովագրողը չի հատուցում ծախսերը, որոնք. 4.11.1 Գերազանցում են սահմանված ապահովագրական գումարը և առկա ենթասահմանաչափերը, 4.11.2 Չեն համաձայնեցվել Աջակցման Կենտրոնի հետ, եթե չհամաձայնեցված գործողությունները հանգեցրել են Ապահովագրողի վնասների ավելացմանը, փոխհատուցման համար ներկայացված հաշիվ-ապրանքագրերի անհիմն ավելացմանը, եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է Աջակցման Կենտրոն պարտադիր դիմում/ահազանգում: Ապահովագրողը իրավունք ունի հատուցել նման ծախսերը մասնակի կամ ամբողջությամբ, եթե Աջակցման Կենտրոն չդիմելու պատճառները համարի օբյեկտիվ, 4.11.3. Կապված բարոյական վնասի փոխհատուցման հետ:	4.9.1. Criminal and civil cases that existed before the start of the insurance period. 4.10. The following are not recognized as insurance accidents of the risk “Technical assistance on the road” and the incurred expenses are not covered: 4.10.1. The breakdown or loss of a motor vehicle older than 5 years and road accident of a motor vehicle older than 10 years, 4.10.2. The damage to a motor vehicle with permissible maximum weight exceeding 3.5 tons, 4.10.3. The compensation for losses on civil liability of utilising vehicles, 4.10.4. The damage to the vehicle carrying passengers for a fee, regardless whether with and without a permit. 4.11. In any case, the Insurer shall not indemnify expenses that: 4.11.1 Exceed the established sum insured and the applicable sublimits, 4.11.2 Are not coordinated with the Assistance center of the Insurer, if the uncoordinated actions led to an increase in the losses of the Insurer, unreasonable overstatement of invoices provided for reimbursement, when the Contract requires mandatory application to the Assistance center of the Insurer. The insurer has the right to reimburse such expenses in full or in part, if it deems the reasons for not contacting the Assistance center objective; 4.11.3. Are associated with compensation for moral damage.
12.4.1. Պայմանագիր կնքելիս պահանջել, որ Ապահովագրված անձը անցնի բժշկական զննություն՝ նրա առողջական փաստացի վիճակը գնահատելու համար (բացառությամբ էլեկտրոնային եղանակով ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում):

12.4.2. Ստուգել ապահովագրական պատահարի վերաբերյալ տրամադրված փաստաթղթերը՝ հայտարարված դեպքը ապահովագրական պատահար ճանաչելու և ապահովագրական հատուցման վճարի չափը որոշելու համար:

12.4.3. Տեղեկատվության հարցում կատարել այն կազմակերպություններից, որոնք տեղյակ են ապահովագրական պատահարի հանգամանքներից, ներառյալ Ապահովագրված անձի առողջական վիճակից:

12.4.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո իրականացնել Ապահովագրված անձի բժշկական հետազոտություն Ապահովագրողի կողմից նշված բժշկի մոտ:

12.5 Ապահովադիրն իրավունք ունի՝

12.5.1. Ստանալ ապահովագրության վկայագիրը (ապահովագրության պայմանագիրը) ժամանակին,

12.5.2. Ապահովագրողից պահանջել պարզաբանել ապահովագրության կանոններում և ապահովագրության պայմանագրերում պարունակվող դրույթները, Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական գումարի փոփոխությունների, ապահովագրավճարի հաշվարկման կարգը:

12.6 Ապահովագրված անձն իրավունք ունի՝

12.6.1. Ապահովագրական պայմանագրով և սույն կանոններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում:

12.6.2. Ապահովագրողից պահանջել պարզաբանել ապահովագրության կանոններում և ապահովագրության պայմանագրերում պարունակվող դրույթները, պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական գումարի փոփոխությունների կարգը:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Ապահովագրության պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե Կողմերը համաձայնության չեն գալիս, ապա գործը փոխանցվում է դատական քննման՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

12.4.1. Request a medical examination to assess the Insured person's state of health (except when concluding the Contract online).

12.4.2. To check the documents submitted when applying for an insurance compensation in order to make a decision on recognizing the declared event as an insurance accident and determining the amount of insurance compensation.

12.4.3. Request information from organizations that have information about the circumstances of the insurance accident, including the state of health of the Insured person.

12.4.4. Conduct a medical examination of the Insured person by a doctor of the Insurer's choice after the occurrence of an insurance accident.

12.5 The Insured has the right to:

12.5.1. Timely receive the insurance policy (insurance contract).

12.5.2. Require the Insurer to clarify the provisions of the Rules and the Contract, calculations of changes in the sum insured during the term of the Contract, calculations of the insurance premium.

12.6 The Insured person has the right to:

12.6.1. Receive an insurance compensation in cases stipulated by the Contract and the Rules.

12.6.2. Require the Insurer to clarify the provisions of the Rules and the Contract, calculations of changes in the sum insured during the term of the Contract.

13. RESOLUTION OF DISPUTES

13.1. Disputes related to the Contract are resolved through negotiations. If an agreement is not reached, the dispute is referred to the court in accordance with the current legislation of the Republic of Armenia.

14. ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ / ՓԱԹԵԹՆԵՐ

14.1. «ԷՖԵՍ» ԱՓԲԸ կողմից մատուցվում են աջակցության ապահովագրության Հիմնական և Լրացուցիչ ծրագրեր/փաթեթներ:

14.2 Հիմնական ծրագրերն են՝

- «ԷԼԻՏ» (ELITE),
- «ԼԱՅԹ» (LITE),
- «ԼԱՅԹ+» (LITE+):

14.3. Աջակցության ապահովագրության վկայագիրը ծրագրերից որևէ մեկով կնքելիս վկայագրում պետք է կատարվի այդ մասին հատուկ նշում:

14.4. Վերոնշյալ ապահովագրական ծրագրերից յուրաքանչյուրով ապահովագրական ծածկույթը հետևյալն է.

14.4.1. «ԷԼԻՏ» (ELITE) - Պայմանագրով ապահովագրական պատահարներ են համարվում և Ապահովագրողի կողմից հատուցվում են Կանոնների 5.2, 5.4 և 5.6 կետերով նախատեսված ծախսերը: Ապահովագրական գումարը և այլ փոփոխական պայմանները սահմանվում են ապահովագրության վկայագրով:

14.4.2. «ԼԱՅԹ» (LITE) - Պայմանագրով ապահովագրական պատահարներ են համարվում և Ապահովագրողի կողմից հատուցվում են Կանոնների 5.2 և 5.6 կետերով նախատեսված ծախսերը: Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության վկայագրով, ապա հատուցման առավելագույն սահմանաչափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանվում է 2,000 եվրո:

14.4.3. «ԼԱՅԹ+» (LITE+) - Պայմանագրով ապահովագրական պատահարներ են համարվում և Ապահովագրողի կողմից հատուցվում են Կանոնների 5.2 և 5.6 կետերով նախատեսված ծախսերը: Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության վկայագրով, ապա կիրառվում է 50 եվրո ոչ պայմանական չհատուցվող գումար:

14.5. Լրացուցիչ փաթեթներն են՝

- Անձնագրի կորստի հետ կապված ծախսեր,
- Տարհանում,

14. TRAVEL ASSISTANCE INSURANCE PROGRAMMES

14.1. "EFES" ICJSC provides Main and Additional insurance coverages/programs.

14.2 The Main travel assistance insurance programs are:

- "ELITE",
- "LITE",
- "LITE+".

14.3 When concluding the Policy in accordance with one of the programs, it should be mentioned in the Policy.

14.4. The insurance coverage for each of the above-mentioned program is as follows:

14.4.1. "ELITE" - According to the Contract, expenses foreseen by clauses 5.2, 5.4 and 5.6 of the Rules are considered insurance accidents and are compensated by the Insurer. The sum insured and other changeable conditions are set in the Policy.

14.4.2. "LITE" - According to the Contract, expenses foreseen by clauses 5.2 and 5.6 of the Rules are considered insurance accidents and are compensated by the Insurer. Unless otherwise stated in the Policy, limit of liability equals to EUR 2,000 shall apply to each and every claim.

14.4.3. "LITE+" - According to the Contract, expenses foreseen by clauses 5.2 and 5.6 of the Rules are considered insurance accidents and are compensated by the Insurer. Unless otherwise stated in the Policy, non-conditional deductible equal to EUR 50 shall apply to each and every claim.

14.5. The additional coverages are:

- Expenses related to the loss of a passport
- Evacuation
- Damages to the rented vehicles

- Վարձակալած տրանսպորտային միջոցների վնասներ,
- Կովիդ – 19,
- Վտանգավոր սպորտ և/կամ հոբբիներ,
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- Ուղեբեռի կորստի կամ ուշացման հետ կապված ծախսեր,
- Ճամփորդության անհարմարություններից ապահովագրություն,
- Տան ապահովագրություն,
- Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն,
- Ճամփորդության չեղարկում և հետաձգում:

14.6 Լրացուցիչ փաթեթները կարող են ավելացվել միայն Էլիտ Ծրագրին՝ համապատասխան հավելավճարի դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով:

14.7 Լրացուցիչ փաթեթների ապահովագրական ծածկույթները սահմանվում են կանոնների Հավելված 1՝ Աջակցության Ապահովագրության Լրացուցիչ Ծածկույթներով:

14.8 Աջակցության ապահովագրության վկայագրում հիմնական և լրացուցիչ փաթեթներից մեկը կամ մի քանիսը ավելացնելու դեպքում վկայագրում պետք է կատարվի այդ մասին հատուկ նշում՝ տվյալ փաթեթին համապատասխան հետևյալ Կոդերով.

- Բժշկական ծախսեր – MED
- Հետմահու ռեպատրիացիայի հետ կապված ծախսեր – PHR
- Օգնության կազմակերպման հետ կապված ծախսեր – AST
- Անձնագրի կորստի հետ կապված ծախսեր – PAS
- Տրանսպորտային ծախսեր – TRA
- Կովիդ – 19 – COV
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն – PA
- Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն – LIA
- Տարհանում – EVC
- Վարձակալած տրանսպորտային միջոցի վնասներ – RAC
- Վտանգավոր սպորտ և/կամ հոբբիներ – SPO
- Ուղեբեռի կորստի կամ ուշացման հետ կապված ծախսեր – LUG
- Ճամփորդության անհարմարություններից ապահովագրություն – INC

- COVID-19,
- Dangerous sports/hobbies,
- Personal accidents insurance,
- Luggage insurance,
- Travel Inconveniences insurance,
- Home insurance,
- Civil liability insurance,
- Travel delay or cancellation insurance.

14.6 The additional coverages can be added only to the Elite program with a surcharge, if not otherwise stated in the Policy.

14.7 The insurance scope of the additional coverages are stipulated in Appendix 1 to the Rules – Additional Coverages of Travel Assistance Insurance.

14.8 In the case of adding one or more of the main and additional coverages to the travel insurance contract, a special note about this must be made in the certificate with the following codes corresponding to the given coverage:

- Medical expenses – MED
- Posthumous repatriation expenses – PHR
- Assistance expenses – AST
- Expenses related to the loss of a passport – PSA
- Transportation expenses – TRA
- COVID-19 – COV
- Personal accidents insurance – PA
- Civil liability insurance – LIA
- Evacuation – EVC
- Damages to rented vehicles – RAC
- Dangerous sport and/or hobbies – SPO
- Luggage insurance – LUG
- Travel inconveniences insurance – INC
- Home insurance – PR
- Travel delay or cancellation insurance – CA

- | | |
|--|--|
| <ul style="list-style-type: none">• Տան ապահովագրություն - PR• Ճամփորդության չեղարկում և հետաձգում – CA | |
|--|--|

Աջակցության Ապահովագրության Կանոնների Հավելված 1
Appendix 1 to Travel Assistance Insurance Rules

(հաստատված 13/09/2025թ. «ԷՖԵՍ» ԱՓԲԸ Խորհրդի թիվ 4 նիստի որոշմամբ)

(confirmed by The Board of EFES ICJSC protocol 4 on 13/09/2025)

Աջակցության Ապահովագրության Լրացուցիչ Ծածկույթներ
Additional Coverages to Travel Assistance Insurance

1. Ընդհանուր Դրույթներ	1. General Conditions
1.1. Սույն Հավելված 1-ը հանդիսանում է «ԷՖԵՍ» ԱՓԲԸ Աջակցության Ապահովագրության Կանոնների (այսուհետ՝ Կանոններ) կից և անբաժանելի մաս (այսուհետ՝ Հավելված): 1.2. Հավելվածը գործում է ի լրումն Կանոնների, և այն իրավահարաբերությունները և եզրույթները, որոնք չեն կարգավորվում Հավելվածում, կարգավորվում են Կանոններում: 1.3. Սույն Հավելվածի և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում են Հավելվածի դրույթները: 1.4. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի, Հավելվածի և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է Պայմանագրի/Վկայագրի: 1.5. Հավելվածը կարգավորում է Կանոնների համաձայն կնքված «ԷՖԵՍ» Աջակցության ապահովագրության ծածկույթում (այսուհետ՝ Հիմնական ծածկույթ) լրացուցիչ ռիսկերի ավելացումը (այսուհետ՝ Լրացուցիչ ծածկույթ), վերջիններիս կցվող ապահովագրական պատահարը, չհատուցվող դեպքերը, կողմերի պարտավորությունները՝ ապահովագրական պատահարի դեպքում, հայտերի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: 1.6. Լրացուցիչ ծածկույթները գործում են միայն ի լրումն Հիմնական ծածկույթի, և դադարեցման կարգը, փոփոխությունների կարգը և այլ հիմնական դրույթները կարգավորվում են Կանոնների միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Հավելվածով: 1.7. Լրացուցիչ ծածկույթները ներառվում են Ապահովագրության Պայմանագրով՝ դրանց մասին առանձին նշումով կամ հղում տալով: Ապահովագրության Պայմանագրում Լրացուցիչ Ծածկույթը նշված չլիներև դեպքում Լրացուցիչ Ծածկույթներով նախատեսված հատուցվող պատահարները համարվում են բացառություն: 1.8. Լրացուցիչ ծածկույթների շրջանակներում, ապահովագրական հատուցում ստանալու դիմումի ներկայացման, ինչպես նաև փաստաթղթերի տրամադրման և այլ գործողությունների ժամկետները կարգավորվում են Կանոններին համաձայն:	1.1. This Appendix 1 (hereinafter Appendix) is an integral and inseparable part of EFES ICJSC Assistance Insurance rules (hereinafter Rules). 1.2. The Appendix operates in addition to the Rules, and the relations or definitions, which are not covered under the Appendix, are regulated by the Rules. 1.3. In case of inconsistency between the Appendix and the Rules, the clauses of Appendix should prevail. 1.4. In case of inconsistency between the insurance Contract/Policy, Appendix and the Rules, the Contract/Policy should prevail. 1.5. The Appendix regulates the inclusion of additional risks (hereinafter Additional Coverages) to the main coverages, concluded under the Rules (hereinafter Main Coverage), the regulation of the accidents, claims, exclusions, liabilities of the parties in case of accident, the necessary documents for claims settlement. 1.6. The Additional Coverages are valid only in addition to the Main Coverage, and the procedure for termination, amendments, and other essential provisions are regulated by the Rules, unless otherwise provided by the Appendix. 1.7. The Additional Coverages are included in the Policy by a special note or link to the coverages. The case of absence of the note or the link, all the insurance accidents that fall under the scope of the Additional Coverages are excluded from the coverage. 1.8. The terms for submitting an application for insurance compensation for Additional Coverages, as well as providing documents and other actions are regulated under the Rules.
Լրացուցիչ ծածկույթներ	Additional Coverages
2. Անձնագրի կորստի հետ կապված ծախսեր	2. Expenses related to the loss of a passport

2.1 Ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի ապահովագրության պայմանագրով նախատեսված ճամփորդության ընթացքում անձնագրի կորուստը՝ անփութության կամ գողության հետևանքով: 2.2 Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ընթացքում 2.1 կետով նշված իրադարձությունը տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի անձնագրի կորստի հետևանքով հարկադիր կեցության (ոչ ավել քան 3 օր, փաստացի ծախսի չափով, բայց որ ավել քան օրական 200 եվրոյին համարժեք դրամ) և մշտական բնակության երկիր վերադարձի տոմսի փոխարինման կամ վերաամրագրման ողջամիտ ծախսերը (փաստացի ծախսի չափով, բայց ոչ ավել քան 500 եվրոյին համարժեք դրամ), եթե ՀՀ վերադարձի վկայականը մինչև ապահովագրված անձի վերադարձի թռիչքը պատրաստ չի եղել: 2.3 Ի լրումն Կանոններով սահմանված բացառությունների՝ ապահովագրական պատահար չեն համարվում և ենթակա չեն հատուցման ծախսերը. 2.3.1. Պատահարները, որոնց մասին տեղական իշխանություններին կամ հյուպատոսական գրասենյակներին 24 ժամվա ընթացքում չի հաղորդվել, 2.3.2. Կեցության կամ վերադարձի տրանսպորտի հետ չառնչվող կամ անուղղակի առնչվող ծախսերը, 2.3.3. Անձնագրի կամ ճանապարհորդական փաստաթղթերի փոխարինման ծախսերը, 2.3.4. Այն ծախսերը, որոնք հատուցվել են երրորդ անձանց կողմից, 2.3.5. Պատահարները, որոնք տեղի են ունեցել Ապահովագրված անձի մշտապես բնակության երկրում և/կամ ապահովագրության տարածքից դուրս և/կամ ապահովագրության ժամկետից դուրս, 2.3.6. Տրանսպորտային դասի կամ կացարանի դասի բարձրացում՝ գերազանցելով ողջամտությունը: 2.4. Ապահովագրական հատուցում ստանալու համար Շահառուն պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը 2.4.1. Ապահովագրական հատուցում ստանալու դիմում, 2.4.2. Իրավասու մարմնի կողմից տրամադրած ՀՀ վերադարձի վկայականը, 2.4.3. Ապահովագրված անձի վերաթողարկված անձնագրի պատճենը, 2.4.4. Կեցության և վերադարձի տոմսի փոխարինման կամ վերաամրագրման ծախսը հաստատող փաստաթղթերը, 2.4.5. Ապահովագրական հատուցման որոշման կայացման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր:	2.1. The loss of the Insured's passport due to negligence or theft during the trip specified in the insurance contract shall be considered an insured event. 2.2. During the validity of the Insurance Contract, in the event of the occurrence of the event specified in clause 2.1, the Insurer shall indemnify the reasonable expenses incurred by the Insured due to the loss of their passport, including expenses for compulsory stay (not exceeding 3 days, within the actual costs, but not more than the AMD equivalent of 200 euros per day) and for the replacement or rebooking of the return ticket to the country of permanent residence (within the actual costs, but not more than the AMD equivalent of 500 euros), provided that the certificate of return to the Republic of Armenia has not been issued before the Insured's return flight. 2.3. In addition to the exclusions defined by the Rules, the following expenses shall not be considered insured events and shall not be subject to indemnification: 2.3.1. Incidents that have not been reported to the local authorities or consular offices within 24 hours. 2.3.2. Expenses not related to, or only indirectly related to, accommodation or return transportation. 2.3.3. Expenses for the replacement of the passport or travel documents. 2.3.4. Expenses that have been reimbursed by third parties. 2.3.5. Incidents that occurred in the Insured's country of permanent residence and/or outside the insurance territory and/or outside the insurance period. 2.3.6. Upgrade of the transportation class or accommodation class beyond reasonable limits. 2.4. In order to receive the insurance compensation, the Beneficiary is obliged to submit the following documents: 2.4.1. Application for insurance compensation, 2.4.2. Certificate of Return to the Republic of Armenia issued by the competent authority, 2.4.3. Copy of the reissued passport of the Insured, 2.4.4. Documents confirming the expenses for the replacement or rebooking of accommodation and return tickets, 2.4.5. Other documents necessary for making a decision on insurance compensation.
3. Վարձակալած տրանսպորտային միջոցի վնասներ	3. Damages to rented vehicles.

3.1 Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրով նախատեսված ճամփորդության ընթացքում ապահովագրված անձի կողմից վարձակալված թեթև մարդատար մեքենային պատճառված վնասը: 3.2. Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ընթացքում 3.1 կետով նշված իրադարձությունը տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը տրամադրում է ապահովագրական հատուցում, եթե բավարարված են ստորև բոլոր նախապայմանները. 3.2.1. Վարձակալված տրանսպորտային միջոցը ունի գործող ավտոտրանսպորտային միջոցի գույքային վնասների ապահովագրություն, որը տրամադրվել է վարձակալության ընկերության կամ լիազորված ապահովագրողի կողմից, 3.2.2. Ապահովագրված անձը լիազորված վարորդ էր և վարում էր տրանսպորտային միջոցը պատահարի պահին, 3.2.3. Պատահարը տեղի է ունեցել վարձակալության ժամկետի և տրանսպորտային միջոցի ապահովագրության ժամկետի ընթացքում, և վերջինիս պայմաններով նախատեսված ապահովագրական տարածքում, 3.2.4. Պատահարի մասին համաձայն գործող ընթացակարգի հաղորդվել է տեղական իշխանություններին և/կամ վարձակալության ընկերությանը: 3.3 Ապահովագրողի կողմից վճարման ենթակա գումարը հավասար է հետևյալներից ամենափոքրին. 3.3.1. Վարձակալված տրանսպորտային միջոցի ապահովագրությամբ նախատեսված չհատուցվող գումար, 3.3.2. Վարձակալության ընկերության կամ անկախ գնահատողի կողմից որոշված տրանսպորտային միջոցի վերանորոգման արժեք, 3.3.3. 500 եվրո: 3.4. Ի լրումն Կանոններով սահմանված բացառությունների՝ ապահովագրական պատահար չեն համարվում և ենթակա չեն հատուցման ծախսերը. 3.4.1. Վնասը, որը չի հաղորդվել վարձակալության ընկերությանը կամ համապատասխան մարմիններին պատահարից հետո 24 ժամվա ընթացքում, 3.4.2. Կանխամտածված վնասի, կոպիտ անփութության կամ անզգույշ վարման հետևանքով կորուստներ (ներառյալ հանրային օգտագործման ճանապարհներից դուրս օգտագործումը, դրիֆտը և այլն), 3.4.3. Վնասվածքներ, որոնք չեն ներառվում ստանդարտ վարձակալության պայմանագրերում (օրինակ՝ անվաղողեր,	3.1. An insured event shall be considered the damage caused by the Insured to a rented passenger vehicle during the trip specified in the insurance contract. 3.2. During the validity of the Insurance Contract, in the event of the occurrence of the event specified in clause 3.1, the Insurer shall provide insurance indemnity if all of the following preconditions are met: 3.2.1. The rented vehicle is covered by valid motor property damage insurance provided by the rental company or an authorized insurer, 3.2.2. The Insured was an authorized driver and was operating the vehicle at the time of the incident, 3.2.3. The incident occurred within the rental period and the validity period of the vehicle's insurance, and within the insurance territory specified by the latter's terms, 3.2.4. The incident was reported to the local authorities and/or the rental company in accordance with the applicable procedures. 3.3. The amount payable by the Insurer shall be equal to the lowest of the following: 3.3.1. The deductible specified under the rental vehicle insurance, 3.3.2. The repair costs of the vehicle as determined by the rental company or an independent assessor, 3.3.3. 500 euros. 3.4. In addition to the exclusions defined by the Rules, the following shall not be considered insured events and shall not be subject to indemnification: 3.4.1. Damage not reported to the rental company or the competent authorities within 24 hours after the incident, 3.4.2. Losses resulting from intentional damage, gross negligence, or careless driving (including off-road use, drifting, etc.), 3.4.3. Damage not covered under standard rental agreements (such as tires, chassis, roof, windshield), unless explicitly
---	---

շասսի, տանիք, դիմապակի), եթե դա հստակորեն նշված չէ վարձակալության պայմանագրում, 3.4.4. Մեխանիկական խափանում կամ մաշվածություն, որը չի առաջացել վթարի հետևանքով, 3.4.5. Վնաս, որը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից ակոհոլի, թմրանյութերի կամ այլ թունավոր նյութերի օգտագործման ընթացքում և/կամ արդյունքում, 3.4.6. Վարձակալության պայմանագրի կանոնների խախտում, ներառյալ տրանսպորտային միջոցի վարումը թույլատրված գոտիներից դուրս, 3.4.7. Վարձակալության ընկերության կողմից սահմանված տուգանքներ, տույժեր կամ վարչական վճարներ, 3.4.8. Վնասները, որոնք հատուցվել են երրորդ անձանց կողմից, 3.4.9. Երրորդ անձանց գույքին, առողջությանը կամ կյանքին պատճառված վնասները, 3.4.10. Վարձակալված տրանսպորտային միջոցի ներսում գտնվող անձնական իրերի գողություն, կորուստ կամ վնաս, 3.4.11. Սխալ վառելիքի օգտագործում կամ վառելիքի լիցքավորման սխալների կամ հեղուկի պատշաճ մակարդակը չպահպանելու պատճառով առաջացած վնաս, 3.4.12. Վարձակալված տրանսպորտային միջոցի ապահովագրությամբ ապահովագրական պատահար չհամարվող այլ պատահարները: 3.5. Ապահովագրական հատուցում ստանալու համար Շահառուն պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը 3.5.1. Ապահովագրական հատուցում ստանալու դիմում, 3.5.2. Վարձակալության պայմանագրի պատճեն, 3.5.3. Վարձակալված մեքենայի ապահովագրության պայմանագիրը, որտեղ հստակ երևում է ապահովագրության պայմանները և չհատուցվող գումարը, 3.5.4. Պատահարի վերաբերյալ պաշտոնական զեկույց՝ թողարկված ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի կողմից, 3.5.5. Վնասի մասին զեկույց և վարձակալության ընկերության կողմից տրված վերանորոգման հաշիվ-ապրանքագիր, 3.5.6. Չհատուցվող գումարի վճարման ապացույց,	specified in the rental contract, 3.4.4 Mechanical breakdown or wear and tear not resulting from an accident, 3.4.5. Damage occurring while, and/or as a result of, the Insured being under the influence of alcohol, drugs, or other toxic substances, 3.4.6. Breach of the rental agreement terms, including driving the vehicle outside authorized zones, 3.4.7. Penalties, fines, or administrative fees imposed by the rental company, 3.4.8. Damages compensated by third parties, 3.4.9. Damage caused to third-party property, health, or life, 3.4.10. Theft, loss, or damage of personal belongings inside the rented vehicle, 3.4.11. Damage caused by misfuelling, fueling errors, or failure to maintain proper levels of liquids, 3.4.12. Other incidents not considered insured events under the rental vehicle's insurance. 3.5. In order to receive insurance indemnity, the Beneficiary shall provide the following documents: 3.5.1. Application for insurance indemnity, 3.5.2. Copy of the rental agreement, 3.5.3. The insurance contract of the rented vehicle clearly indicating the terms of coverage and the deductible, 3.5.4. Official incident report issued by the police or other competent authority, 3.5.5. Damage report and repair invoice issued by the rental company, 3.5.6. Proof of payment of the deductible,
---	---

3.5.7. Ապահովագրական հատուցման որոշման կայացման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր:	3.5.7. Other documents necessary for making a decision on insurance compensation.
4. Տարհանում	4. Evacuation
4.1. Ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի ճամփորդության երկրում արտակարգ իրավիճակի ի հայտ գալը, ինչով պայմանավորված ապահովագրված անձը ցանկանում է հնարավորինս շուտ ճամփորդության երկրից տարհանվել իր մշտական բնակության երկիր: 4.2. Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ընթացքում 4.1. կետով նշված իրադարձությունը համարվում է ապահովագրական պատահար, այն տեղի է ունեցել ճամփորդության ընթացքում: Մինչև ճամփորդության սկիզբը ապահովագրական պատահարի նշաններ ունեցող որևէ իրադարձության համար չի տրամադրվում հատուցում: 4.3. Տարհանում ապահովագրական ծածկույթի ներքո արտակարգ իրավիճակ է համարվում. 4.3.1. Ճամփորդության քաղաքում ահաբեկչական ակտը, որը սահմանվում է որպես բռնության կամ բռնության սպառնալիքի ցանկացած անօրինական կիրառում անհատի կամ խմբի կողմից և թիրախավորում է քաղաքացիական անձանց, հանրային ենթակառուցվածքները կամ իշխանություններին՝ վախեցնելու, հարկադրելու կամ քաղաքական, կրոնական կամ գաղափարախոսական նպատակներին հասնելու նպատակով: Այն ներառում է ռմբակոծություններ, զինված հարձակումներ, պատանդ վերցնելը կամ այլ գործողություններ, որոնք իրավասու միջազգային կամ ազգային մարմինների կողմից ճանաչվել են որպես ահաբեկչություն, 4.3.2. Ճամփորդության երկրի կառավարությունը պաշտոնապես հայտարարում է արտակարգ դրություն, որը հասկացվում է որպես արտակարգ միջոցառումների օրինական կիրառում՝ ի պատասխան այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք են քաղաքացիական անկարգությունները, բնական աղետները, լայնածավալ բռնությունը կամ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգները, որոնք զգալիորեն խաթարում են հասարակական կյանքի բնականոն ընթացքը կամ սահմանափակում են տեղաշարժը, հասանելի ծառայությունները կամ հանրային անվտանգությունը, 4.3.3. ՀՀ արտաքին գործերի նախարարությունը պաշտոնական հայտարարություն է տարածում, որով ճանապարհորդության երկիրը սահմանում է հակամարտության գոտի կամ բարձր ռիսկի գոտի՝ քաղաքական անկայունության սրման, ռազմական գործողությունների, անվտանգության սպառնալիքների կամ այլ զարգացումների պատճառով, որոնք զգալի ռիսկեր են	4.1. An insured event shall be considered the occurrence of an emergency in the country of travel, as a result of which the Insured wishes to be evacuated to their country of permanent residence as soon as possible. 4.2. During the validity of the Insurance Contract, the event specified in clause 4.1 shall be considered an insured event if it occurs during the trip. No indemnity shall be provided for any event showing signs of an insured event that existed prior to the commencement of the trip. 4.3. For the purposes of coverage under evacuation insurance, an emergency shall be considered: 4.3.1. A terrorist act in the city of travel, defined as any unlawful use or threat of violence by an individual or group targeting civilians, public infrastructure, or authorities with the aim of intimidation, coercion, or achieving political, religious, or ideological objectives. This includes bombings, armed attacks, hostage-taking, or other actions recognized as terrorism by the competent international or national authorities, 4.3.2. An official declaration of a state of emergency by the government of the country of travel, defined as the lawful imposition of extraordinary measures in response to events such as civil unrest, natural disasters, large-scale violence, or threats to national security that significantly disrupt normal public life or restrict movement, access to services, or public safety, 4.3.3. An official statement by the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia declaring the country of travel as a conflict zone or high-risk zone due to political instability, military operations, security threats, or other developments that present significant risks for Armenian citizens present in that country.

ներկայացնում տվյալ երկրում գտնվող հայ քաղաքացիների համար:

4.4. Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողը հատուցում է նոր ավիատոմսի (էկոնոմ դասով) ողջամիտ ծախսերը (առավելագույնը 500 եվրոյի համարժեքը), եթե հնարավոր չէ փոփոխել կամ չեղարկել նախապես ամրագրված ավիատոմսը: Ընդ որում, այն դեպքերում, երբ քաղաքացիական չվերթներ առկա չեն կամ առկա են սահմանափակ քանակով, և ապահովագրված անձը չի կարողացել ինքնուրույն ամրագրել և ձեռք բերել նոր ավիատոմս, Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում:

4.5. Ի լրումն Կանոններով սահմանված բացառությունների՝ ապահովագրական պատահար չեն համարվում և ենթակա չեն հատուցման ծախսերը.

4.5.1. Մինչև ապահովագրության սկիզբը գոյություն ունեցող իրադարձությունները. Առաջացած իրադարձությունը (օրինակ՝ ահաբեկչական գործողություն, արտակարգ դրություն, և այլն) տեղի է ունեցել կամ հրապարակայնորեն հայտնի է եղել ուղևորության սկսվելուց կամ ապահովագրական պայմանագրի ձեռքբերումից առաջ,

4.5.2. Բարձր ռիսկայնության գոտի ճամփորդելու հետ. ապահովագրված անձը գիտակցաբար ճանապարհորդել է այնպիսի երկիր կամ տարածաշրջան, որը մեկնման պահին արդեն պաշտոնապես դասակարգվել էր որպես բարձր ռիսկի կամ հակամարտության գոտի ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՄԱԿ-ի կամ այլ ճանաչված միջազգային կազմակերպությունների կողմից,

4.5.3. Պաշտոնական հրահանգների չկատարում. ապահովագրված անձը չի հետևել տեղական իշխանությունների, դեսպանատների կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրված տարահանման հրամաններին կամ անվտանգության հրահանգներին, երբ նման չկատարումը նպաստել է անվտանգ կամ ժամանակին տարահանման անհնարինությանը,

4.5.4. Հասանելի այլընտրանքային միջոցներից հրաժարումը. ապահովագրված անձը հրաժարվել է ողջամիտ այլընտրանքներից, ինչպիսիք են նախնական վերադարձի տոմսի փոփոխությունները կամ պետական մարմինների կամ ավիաընկերությունների կողմից կազմակերպված անվճար հայրենադարձությունը,

4.5.5. Անօրինական գործողություններ. ապահովագրված անձը ներգրավված է եղել անօրինական կամ հանցավոր գործունեության մեջ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստելով արտակարգ իրավիճակի առաջացմանը կամ խոչընդոտել է տարահանմանը,

4.4. In the event of an insured event, the Insurer shall indemnify the reasonable costs of purchasing a new airline ticket (economy class) up to a maximum of the AMD equivalent of 500 euros, if it is not possible to change or cancel the previously booked ticket. In cases where no civil flights are available or only limited flights exist, and the Insured is unable to independently book and purchase a new ticket, the Insurer shall bear no responsibility.

4.5. In addition to the exclusions defined by the Rules, the following shall not be considered insured events and shall not be subject to indemnification:

4.5.1. Events existing prior to the commencement of insurance: any event (e.g., terrorist act, state of emergency, etc.) that occurred or was publicly known before the start of the trip or before the conclusion of the insurance contract,

4.5.2. Travel to a high-risk zone: when the Insured knowingly traveled to a country or region that, at the time of departure, had already been officially classified as a high-risk or conflict zone by the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, the United Nations, or another recognized international organization,

4.5.3. Failure to comply with official instructions: when the Insured failed to follow evacuation orders or safety instructions issued by local authorities, embassies, or the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, and such failure contributed to the impossibility of safe or timely evacuation,

4.5.4. Refusal of available alternatives: when the Insured refused reasonable alternatives, such as changing the original return ticket or using free repatriation organized by state authorities or airlines,

4.5.5. Illegal activities: when the Insured was involved in illegal or criminal activities that directly or indirectly contributed to the emergency or hindered the evacuation,

4.5.6. Travel for high-risk missions: the insurance shall not apply

4.5.6. Ճանապարհորդության նպատակը կապված է բարձր ռիսկի առաքելությունների հետ. Ապահովագրությունը չի գործում այն անձանց համար, որոնք ճանապարհորդում են այնպիսի նպատակներով, որոնք բնույթով ենթադրում են վտանգավոր միջավայրերի հետ շփում (օրինակ՝ ռազմական թղթակիցներ, ակտիվ հակամարտության գոտիներում գտնվող օգնության աշխատողներ կամ զինվորական անձնակազմ), եթե դա հստակորեն ամրագրված չէ ապահովագրության պայմանագրում: 4.6. Ապահովագրական հատուցում ստանալու համար Շահառուն պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը. 4.6.1. Ապահովագրական հատուցում ստանալու դիմում, 4.6.2. Ապահովագրված անձի անձնագրի պատճեն, 4.6.3. Ճամփորդության համար ամրագրված ավիատոմսերի և կացության ամրագրումը փաստող փաստաթղթեր, 4.6.4. Արտակարգ իրավիճակը հաստատող փաստաթուղթ՝ թողարկված իրավասու մարմնի կողմից, 4.6.5. Նոր ավիատոմսի փաստաթղթեր. հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր, 4.6.6. Ավիաընկերությունից կամ տուրիստական գործակալությունից գրավոր ապացույց, որ նախապես ամրագրված տոմսը չի վերադարձվում կամ չի կարող փոփոխվել, կամ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս կրած ցանկացած բոլոր տույժերն ու տուգանքները, 4.6.7. Ապահովագրական հատուցման որոշման կայացման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր:	to persons traveling for purposes that by nature involve exposure to hazardous environments (e.g., war correspondents, aid workers in active conflict zones, or military personnel), unless explicitly stipulated in the insurance contract. 4.6. In order to receive insurance indemnity, the Beneficiary shall provide the following documents: 4.6.1. Application for insurance indemnity, 4.6.2. Copy of the Insured's passport, 4.6.3. Documents confirming the booking of travel tickets and accommodation, 4.6.4. Document confirming the emergency, issued by the competent authority, 4.6.5. Documents of the new ticket: invoice, payment receipt, 4.6.6. Written confirmation from the airline or travel agency that the originally booked ticket is non-refundable or cannot be changed, or documents showing any applicable penalties and fines, 4.6.7. Other documents necessary for making a decision on insurance compensation.
5. ԿՈՎԻԴ - 19	5. COVID - 19
5.1. Ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի ՊՇՌ մեթոդով իրականացված SARS-CoV-2 ՌՆԹ՝ (այսուհետ՝ Կովիդ-19) Կովիդ-19 դրական թեստի կամ ՀՏ հետազոտությամբ հաստատված Կովիդ-19-ին բնորոշ թոքաբորբի դեպքում ներհիվանդանոցային (ստացիոնար) և արտահիվանդանոցային (ամբուլատոր) պայմաններում Կովիդ-19-ի բուժման նպատակով իրականացված բժշկական ծախսերը, ընդ որում ստացիոնար պայմաններում իրականացված ծախսերը հատուցվում են միայն համապատասխան բժշկի կողմից ստացիոնար բուժման ցուցման և Կովիդ-19 ծանր ընթացքով դեպքերի պարագայում: 5.2. Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ընթացքում 5.1 կետով նշված իրադարձությունը տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է Կանոնների 5.2, 5.4, 5.6 կետերով նախատեսված ծախսերը, ինչպես նաև բժշկի կողմից ցուցված դեղամիջոցները,	5.1. The insurance accident is the occurrence of medical expenses in hospital (inpatient) and outpatient (outpatient) due to COVID, confirmed by SARS-CoV-2 RNA positive test or pneumonia characteristic of COVID confirmed by CT examination of the Insured person. The inpatient expenses are reimbursed only in case of the doctor's prescription and complicated cases of COVID. 5.2. In case of insurance accidents described in clause 5.1 occurred during the insurance period, the Insurer compensates the costs prescribed in the clauses 5.2, 5.4, 5.6 of the Rules, as well as the medications, vitamins and mineral complexes,

վիտամինները, ինչպես նաև միներալային կոմպլեքսները, հետազոտությունները և ՊՇՌ թեստի արժեքը (միայն դրական պատասխանի դեպքում, կամ բժշկի կողմից ցուցված լինելու դեպքում): 5.3. Ի լրումն Կանոնների 4.5 – 4.9 կետերով սահմանված բացառությունների՝ ապահովագրական պատահար չեն համարվում և ենթակա չեն հատուցման ծախսերը, կապված. 5.3.1. Ապահովագրված անձի մեկուսացման ծախսերը՝ անկախ նրանից, թե որտեղ է մեկուսացվում, և ինչ ժամկետով (ստացիոնար պայմաններում, առանձին բնակարանում, հյուրանոցում, և այլն), 5.3.2. Ապահովագրված անձի սեփական նախաձեռնությամբ ՊՇՌ թեստի հետ՝ բացասական պատասխանի դեպքում: Թեստի դրական լինելու դեպքում կատարված ծախսը ենթակա է հատուցման, 5.3.3. Անուղղակի ծախսերը, այդ թվում Կովիդ-19 թեստի դրական պատասխանի դեպքում ժամանակավոր այցի երկիր մուտքի մերժման և/կամ մշտական բնակության երկիր վերադարձի հետ կապված ծախսերը: 5.4. Կանոնների 4.6.7 կետով բացառվող համաճարակը չի տարածվում Կովիդ-19 Լրացուցիչ ծածկույթի վրա, եթե Ծածկույթը ներառված է Ապահովագրության Պայմանագրում: 5.5. Հավելվածի 2-րդ կետի ենթակետերում օգտագործվող «թեստի դրական պատասխան» նշանակում է Կովիդ-19 վարակի առկայության հաստատում Ապահովագրված անձի մոտ: 5.6. ԱՄՆ-ի, Կանադայի և Ճապոնիայի տարածքում Հավելվածի 5.2 կետում նշված ծախսերի համար սահմանվում է առավելագույն սահմանաչափ Պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում՝ 5,000 եվրոյին համարժեք << դրամի չափով, ընդ որում ԱՄՆ տարածքի համար գործում է նաև Կանոնների 5.13 կետով սահմանված օրական 2,000 եվրոյին համարժեք << դրամ ենթասահմանաչափը: Այլ երկրների համար հատուցման սահմանաչափը սահմանվում է Պայմանագրի ապահովագրական գումարի չափով: 5.7. Ապահովագրական հատուցման վճարման կարգը, պատահարի դեպքում կողմերի պարտավորությունները, անհրաժեշտ փաստաթղթերը, և այլ կարգավորումները սահմանվում են Կանոններով:	examinations, and the cost of the PCR test (in case of positive result or if prescribed by the doctor). 5.3. In addition to the exclusions of clauses 4.5 – 4.9 of the Rules, the accidents are excluded and are not subject to compensation, if are connected to: 5.3.1. The costs of isolation of the Insured person, regardless of where the isolation location and period (in stationary conditions, in a separate apartment, hotel, etc.). 5.3.2. The costs of the PCR test by the Insured person's own initiative, in case of a negative result. If the test is positive, the expenses incurred are subject to compensation. 5.3.3. Indirect costs, including costs associated with the denial of entry to the country of temporary visit and/or return to the country of permanent residence in case of a positive COVID test result. 5.4. The pandemic exclusion by clause 4.6.7 of the Rules does not apply to the Additional Coverage COVID if the coverage is included in the Contract. 5.5. "Positive test result" used in the subparagraphs of paragraph 2 of the Appendix means confirmation of the presence of a COVID infection in the Insured person. 5.6. A sublimit equivalent to EUR 5,000 in AMD is applicable to the cases in USA, Canada, and Japan for expenses in clause 5.2 of the Appendix. Moreover, a daily limit of EUR 2,000 for the cases in USA is also applicable according to the clause 5.13 of the Rules. For other countries the limit of liability is the sum insured of the Contract. 5.7. The insurance compensation procedure, the liabilities of the parties in case of accident, needed documents for the claims settlement and other regulations are regulated by the Rules.
6. Վտանգավոր սպորտ և/կամ հոբբիներ	6. Dangerous sports/hobbies
6.1. Ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի՝ վտանգավոր սպորտաձևերով և/կամ վտանգավոր հոբբիներով համաձայն Կանոնների 4.6.13 կետի սիրողական (մեկանգամյա հիմքով, օրինակ՝ արձակուրդի կամ հանգստյան օրերի ժամանակ) զբաղվելու	6.1. An insured event shall be considered the death of the Insured or the medical expenses incurred for the treatment of injuries sustained as a result of amateur (occasional, e.g.,

հետևանքով ստացած վնասվածքների բուժման նպատակով իրականացված բժշկական ծախսերը, ինչպես նաև Ապահովագրված անձի մահը: 6.2. Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ընթացքում 6.1 կետով նշված իրադարձությունը տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը հատուցում է Կանոնների 5.2, 5.4, 5.6 կետերով նախատեսված ծախսերը: 6.3. Ի լրումն Կանոնների 4.5 – 4.9 կետերով սահմանված բացառությունների՝ ապահովագրական պատահար չեն համարվում և ենթակա չեն հատուցման ծախսերը, կապված. 6.3.1. Կանոնների 4.6.14 կետերով նշված էքստրեմալ սպորտաձևերի և/կամ հոբբիների հետևանքով առաջացած ծախսերի կամ մահվան հետ: 6.3.2. Կանոնների 4.6.15 կետերով նշված ցանկացած սպորտով պրոֆեսիոնալ զբաղվելու հետևանքով առաջացած ծախսերի կամ մահվան հետ: 6.3.3. Անվտանգության կանոնների, որոնք կիրառելի են տվյալ վտանգավոր սպորտաձևի/հոբբիի վնասները կանխելուն կամ նվազեցնելուն, խախտման հետևանքով: 6.4. Կանոնների 4.6.13 կետը չեն տարածվում Վտանգավոր սպորտ և/կամ հոբբիներ Լրացուցիչ ծածկույթի վրա, եթե Ծածկույթը ներառված է Ապահովագրության Պայմանագրում: 6.5. Հատուցման սահմանաչափը սահմանվում է Պայմանագրի ապահովագրական գումարի չափով: 6.6. Ապահովագրական հատուցման վճարման կարգը, պատահարի դեպքում կողմերի պարտավորությունները, անհրաժեշտ փաստաթղթերը և այլ կարգավորումները սահմանվում են Կանոններով:	during a holiday or weekend) participation in hazardous sports and/or hobbies in accordance with clause 4.6.13 of the Rules. 6.2. In case of the occurrence of the event specified in clause 6.1 during the period of the Insurance Contract, the Insurer shall reimburse the expenses provided for in clauses 5.2, 5.4, 5.6 of the Rules. 6.3. In addition to the exclusions of clauses 4.5 – 4.9 of the Rules, the accidents are excluded and are not subject to compensation, if are connected to: 6.3.1. With expenses or death caused by extreme sports and/or hobbies mentioned in clause 4.6.14. of the Rules. 6.3.2. Expenses or death resulting from professional engagement in any sport as specified in clause 4.6.15 of the Rules. 6.3.3. As a result of violation of the safety rules applicable to the prevention or mitigation of damages related to the given hazardous sport/hobby. 6.4. The Clause 4.6.13. of the Rules do not apply to the Additional Coverage Dangerous sports/hobbies if the coverage is included in the Contract. 6.5. The limit of liability is the sum insured of the Contract. 6.6. The insurance compensation procedure, the liabilities of the parties in case of accident, needed documents for the claims settlement and other regulations are regulated by the Rules.
7. Դժբախտ պատահարներից ապահովագրություն	7. Personal Accidents Insurance
7.1. Սույն Ծածկույթի ներքո ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (ապահովագրված անձի, շահառուի) գույքային շահերը, կապված դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան և ֆունկցիոնալության սահմանափակման հետ: 7.2. Ապահովագրական ռիսկեր, ապահովագրական պատահար. 7.2.1. Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների զուգադիպումը, այդ թվում՝ անաֆիլակտիկ շոկը (բացառությամբ առաջացած դեղամիջոցներից և/կամ սննդից), սուր թունավորումը (բացառությամբ սննդային թունավորումը), շնչահեղձումը, ջրահեղձումը, մարմնի գերսառեցումը կամ տաքացումը, այրվածքները, և այլն,	7.1. The object of the insurance is the property interests of the Insured (Insured person, Beneficiary) regarding the death or impairment of functionality of the Insured person as a result of a personal accident. 7.2. Insured risks, insurance accidents: 7.2.1. Personal accident is an external, short-term (up to several hours), unintentional, sudden confluence of circumstances and conditions, such as: anaphylactic shock (except when resulting from medications and/or food), acute poisoning (except food poisonings), suffocation, drowning, body freezing or overheating, burns, etc., as a result of which the Insured

որոնց դեպքում Ապահովագրված անձի կամքից անկախ մարմնական վնասվածքների կամ տոքսիկ ազդեցության հետևանքով վնաս է հասցվում նրա առողջությանը, կամ սահմանափակվում է նրա ֆունկցիոնալությունը, կամ վրա է հասնում նրա մահը:

7.2.2. Դժբախտ պատահար չեն համարվում հիվանդությունները կամ դրանց բարդացումները (ինչպես նախկինում ախտորոշված, այնպես էլ առաջին անգամ հայտնաբերված), ինչպես նաև այն հիվանդությունները կամ դրանց բարդացումները, որոնք առաջացել (զարգացել) են արտաքին գործոնների ազդեցության հետևանքով, այդ թվում նաև՝ սրտամկանի ինֆարկտը, գլխուղեղի կաթվածը, անևրիզմները, օրգանների ֆունկցիոնալ անբավարարությունը, օրգանների բնածին արատներ, սխալ բժշկական մանիպուլացիաները, սննդային թունավորումները, դեղամիջոցներից կամ սննդից առաջացած ալերգիկ ռեակցիան՝ ներառյալ անաֆիլաքսիան և այլն:

7.3. Ապահովագրական պատահար են համարվում՝

7.3.1. Դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված անձի մահը:

7.3.2. Դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված անձի ֆունկցիոնալության խորը, ծանր կամ միջին աստիճանի սահմանափակումը:

7.4. Դժբախտ պատահարի հետևանքով մահը և ֆունկցիոնալության սահմանափակումը համարվում են ապահովագրական պատահարներ, եթե դրանք առաջացել են Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրով սահմանված ապահովագրության տարածքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով և առաջին անգամ հաստատվել են համապատասխան իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերով դժբախտ պատահարից հետո՝ ոչ ուշ, քան 1 տարվա ընթացքում:

7.5. Սույն Ծածկույթով ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում՝ յուրաքանչյուր դեպքի համար և համախառն ապահովագրական գումարը սահմանվում է 5,000 եվրոյի չափով՝ եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.6. Դժբախտ պատահարի հետևանքով մահվան դիսկի գծով ապահովագրական հատուցումը կատարվում է Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարի 100%-ի չափով:

7.7. Դժբախտ պատահարի հետևանքով ֆունկցիոնալության սահմանափակման դեպքում ապահովագրական հատուցումը Պայմանագրի շրջանակներում կատարվում է մեկ անգամ և հետևյալ տարբերակներից միայն մեկով՝

person's health is harmed due to bodily injuries or toxic exposure, or they become functionally impaired or die.

7.2.2. Diseases and their complications (both previously diagnosed and newly detected) provoked by external factors, including myocardial infarction, stroke, aneurysms, failures of organs, congenital defects of organs, wrongful medical manipulations, food poisonings, allergic reaction to drugs or food including anaphylactic shock do not constitute a personal accident.

7.3. The insurance accidents are:

7.3.1. Death of the Insured person as a result of a personal accident.

